

### 3. ԱՇԽԱՏՈՒԺԻՑ ԴՈՒՐՍ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ POPULATION OUT OF LABOUR FORCE

Սույն բաժնում ներկայացվող տեղեկատվության աղբյուրը տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի հետազոտությունն է:

Հետազոտությունն մեթոդաբանության նկարագրությունը՝ **2018թ. իրականացված նշանակալի վերանայումներով**, ներկայացված է սույն ժողովածուի «Աշխատուժի հետազոտության մեթոդաբանությունը» բաժնում:

Աշխատուժի վիճակագրության մեթոդաբանության վերանայումն անդրազգային գործընթաց է, որն օբյեկտիվորեն հանգեցրել է **ցուցանիշների ժամանակային շարքերի որոշակի խզման**, ինչը հարկ կլինի նկատի ունենալ տվյալների համեմատության և վերլուծության ժամանակ:

Աշխատաշուկայի նոր զարգացումները պատշաճ կերպով արտացոլելու, աշխատուժի վիճակագրության արդիականությունը և միջազգային համադրելիությունն ապահովելու նպատակով 2018թ.-ից վերանայվել է Աշխատուժի հետազոտության հիմքում ընկած մեթոդաբանությունը: Վերանայման հիմքը 2013թ. Աշխատանքի վիճակագիրների միջազգային 19-րդ համաժողովում ընդունված «Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թերօգտագործման վիճակագրության մասին» (19-րդ ԱՎՄՀ) բանաձևի առանցքային դրույթներն են (տե՛ս նաև սույն ժողովածուի «**Աշխատուժի հետազոտության հիմնական հիմնադրության շրջանակը**» բաժնում):

19-րդ ԱՎՄՀ ներդրման շրջանակում **համաձայն նոր ստանդարտի, 2018թ. ի վեր ՀՀ-ում**.

• Աշխատուժից դուրս բնակչության ցուցանիշները վերաբերում են **ՀՀ մշտական (ռեզիդենտ) բնակչությանը**:

• **Արդիականացվել և ըստ այդմ վերանվանվել է ցուցանիշի անվանումը՝ «Աշխատուժից դուրս բնակչություն»** եզրույթը համարժեք է նախկին՝ «տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն» եզրույթին:

• Զբաղվածության գործառնական սահմանման փոփոխությամբ պայմանավորված, **սեփական սպառման համար ապրանքների արտադրությունը չի համարվում զբաղվածություն**: Ըստ այդմ՝ **սեփական սպառման համար ապրանք արտադրողները**, աշխատաշուկայում իրենց ակտիվության բնույթից կախված, **դասակարգվել են միմյանց բացառող կատեգորիաներից որևէ մեկում՝ «գործազուրկ» կամ «աշխատուժից դուրս բնակչություն»**:

**Աշխատուժից դուրս** բնակչության մեջ ներառվում են անձինք, ովքեր հետազոտվող ժամանակահատվածում չեն եղել զբաղված կամ գործազուրկ:

**Աշխատուժից դուրս** բնակչության մեջ ներառված են անձինք, ովքեր հետազոտվող ժամանակահատվածում **չեն աշխատել և աշխատանք չեն փնտրել**՝ չեն եղել զբաղված կամ գործազուրկ:

Սովորաբար **աշխատուժից դուրս** բնակչությանն են դասվում.

- առկա ուսուցմամբ սովորողները, ուսանողները.
- տնային տնտեսությամբ զբաղվածները.
- կենսաթոշակառուները և հաշմանդամություն ունեցող անձինք.
- երեխաներին, հիվանդ հարազատներին խնամողները.

• զանազան պատճառներով չաշխատող և աշխատանք չփնտրող այլ անձինք (սեփականության օգտագործումից եկամուտ ստացողներ, պարտադիր ժամկետային զինծառայողներ և այլն):

**Աշխատուժից դուրս** բնակչության մեջ առանձնացվել են.

**1. պտտեցիակ գործազուրկներ՝** անձինք, ովքեր հետազոտությանը նախորդող վերջին չորս շաբաթում (ներառյալ հետազոտվող շաբաթը) այս կամ այն կերպ մասնակցություն են ունեցել աշխատաշուկայում, այն է՝

- փնտրել են աշխատանք, բայց պատրաստ չեն եղել անմիջապես անցնել աշխատանքի.
- չեն փնտրել աշխատանք, բայց պատրաստ են եղել անմիջապես անցնել աշխատանքի.

*«Անմիջապես անցնել աշխատանքի» նշանակում է՝ առաջիկա երկու շաբաթվա ընթացքում պատրաստ լինել անցնել աշխատանքի:*

**2. հուսազուրկ գործազուրկներ՝** անձինք, ովքեր չունենալով աշխատանք, հետազոտությանը նախորդող վերջին չորս շաբաթում (ներառյալ հետազոտվող շաբաթը), թեև հարմար աշխատանքի առաջարկի դեպքում ցանկացել են աշխատել, սակայն չեն փնտրել աշխատանք, որովհետև.

- չեն ունեցել հարմար աշխատանք գտնելու հույս.
- չգիտեին որտեղ և (կամ) ինչպես փնտրել աշխատանք.
- չեն ունեցել մասնագիտական հմտություններ / փորձ.
- չեն կարողացել գտնել մասնագիտությանը / որակավորմանը համապատասխան աշխատանք.
- համարվել են շատ երիտասարդ / շատ մեծ տարիքի աշխատանք գտնելու համար.
- տվյալ տարածքում չեն գտել աշխատանք:

**3. անձինք, ովքեր** հետազոտությանը նախորդող վերջին չորս շաբաթում (ներառյալ հետազոտվող շաբաթը) աշխատաշուկայում որևէ մասնակցություն չեն ունեցել, այսինքն **չեն փնտրել աշխատանք և պատրաստ չեն եղել** անցնել աշխատանքի:

**Աշխատուժից դուրս բնակչության մակարդակը** աշխատուժից դուրս բնակչության տեսակարար կշիռն է աշխատանքային ռեսուրսների թվաքանակում:

**Չտվորող և չաշխատող երիտասարդները 15-29 տարեկան անձինք են** (Կրթություն կամ ուսուցում չստացող, զբաղվածություն չունեցող երիտասարդներ), ովքեր հետազոտությանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում ո՛չ զբաղված են եղել որևէ եկամտաբեր տնտեսական գործունեությամբ, ո՛չ էլ ներառված են եղել ֆորմալ կրթության մեջ:

The source of information presented in this section is Labour Force Survey (LFS) carried out in households.

The description of survey methodology with **some major revisions maid in 2018** is presented in the Section “Methodology of the Labour Force Survey” of this handbook.

The aforementioned revision of the methodology of labour statistics, which is a transnational process, objectively has led to a **certain break in the time series of indicators** that should be taken into account when comparing and analyzing data.

For the purposes of adequately reflect new developments in labour market, provide up-to-date labour force statistics and promote their international comparability, the methodology behind the Labour Force Survey has been revised since 2018. The basis of the revision are concepts of “Resolution concerning statistics of work, employment and labour underutilization” adopted by the 19th International Conference of Labour Statisticians (19th ICLS) in October 2013. For more details see

[https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms\\_220535.pdf](https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms_220535.pdf)

(see also the Section “**Basic Conceptual Framework of the Labour Force Survey**” of this handbook).

**In the context of the introduction of the 19th ICLS** according to the new standard, **since 2018:**

- Indicators of population out of labour force refer to **usual resident population**.
- The terminology used are updated and renamed: the term “population out of labour force” is equivalent to the previous term “an economically inactive population”.
- Due to update in operational definition of employment, **an own-use production of goods do not considered as an employment**. Accordingly, depending on the nature of their activity in the labour market, **the latter classified in one of the mutually exclusive categories: "unemployed" or "population out of labour force"**.

**Population out of labour force (Population not in the labour force)** covers either persons, who were not employed or unemployed in the reference period.

**Population out of labour force** are persons **neither work nor look for a job** during the reference period: who were neither in employment nor in unemployment. Generally to the economically inactive population belong:

- full-time students, pupils;
- housekeepers;
- pensioner, persons with disability;
- care-givers to children, sick relatives;
- persons neither working and nor look for a job for various reasons (receivers rent from real estate properties, conscripts etc.).

**Population out of labour force** is distinguished to:

**1. Potentially unemployed** - persons who somehow had a participation in the labour market within the period of the last four weeks prior to the survey (inclusive), that is:

- sought job, but were not ready to start work immediately;
- don't sought job, but were ready to start work immediately;

*“Start to work immediately” means to be ready start to work within the coming two weeks.*

**2. Discouraged unemployed** - jobless persons, who didn't seek job within the period of the last four weeks prior to the survey (inclusive), because:

- hopeless to find a suitable job;
- didn't know where or how to look for a job;
- didn't have professional skills / experience;
- couldn't find job corresponding to profession/ qualification
- considered too young or too old to find a job
- lack of jobs in the area.

**3. Persons neither look for a job nor available to start work** - those **who did not have a participation in the labour** market within the period of the last four weeks (including reference week) prior to the survey.

*Population out of labour force rate* is the share of population not in the labour force to the total number of working age population.

*Youth not in education and not in employment (NEET)* corresponds to the population of aged 15-29 who who were neither engaged in any profitable economic activity nor engaged in formal education during the four weeks preceding the survey.meeting these two conditions: was not in formal employed and not involved in education in the four weeks preceding the survey.

**Population Out of Labour Force by Residency and Sex, 2018**

	Ընդամենը <i>Total</i>	Քաղաք <i>Urban</i>	Գյուղ <i>Rural</i>	
<i>1 000 մարդ persons</i>				
<b>Աշխատուժից դուրս բնակչություն</b>	<b>902.5</b>	<b>534.9</b>	<b>367.7</b>	<b>Population out of labour force</b>
Տղամարդ	290.8	160.9	129.9	Men
Կին	611.7	374.0	237.8	Women
%				
<b>Աշխատուժից դուրս բնակչության մակարդակ</b>	<b>41.1</b>	<b>42.4</b>	<b>39.3</b>	<b>Population out of labour force rate</b>
Տղամարդ	28.4	29.0	27.8	Men
Կին	52.1	52.9	50.9	Women

**3.2. Աշխատուժից դուրս բնակչությունն<sup>1</sup> ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2018թ.  
Population Out of Labour Force by RA Marzes and Yerevan city, 2018**

	Ընդամենը, <i>Total</i> <i>1 000 մարդ / persons</i>	Ընդամենի նկատմամբ, % <i>As share of the total, %</i>	Աշխատուժից դուրս բնակչության մակարդակ, % <i>Population out of labour force rate, %</i>	
<b>Ընդամենը</b>	<b>902.5</b>	<b>100</b>	<b>41.1</b>	<b>Total</b>
ք. Երևան	248.6	27.5	40.4	Yerevan city
Արագածոտն	16.3	1.8	37.7	Aragatsotn
Արարատ	87.3	9.7	38.3	Ararat
Արմավիր	59.2	6.6	25.6	Armavir
Գեղարքունիք	103.7	11.5	52.3	Gegharkunik
Լոռի	103.9	11.5	51.3	Lori
Կոտայք	97.2	10.8	41.3	Kotayk
Շիրակ	103.0	11.4	45.2	Shirak
Սյունիք	31.1	3.4	30.1	Syunik
Վայոց ձոր	9.5	1.1	42.5	Vayots Dzor
Տավուշ	42.9	4.8	47.9	Tavush

<sup>1</sup> Նոր ստանդարտի համաձայն «Աշխատուժից դուրս բնակչությունն եզրույթը համարժեք է նախկին «ոնտեսապես ոչ ակտիվ բնակչություն»:  
According to the new standards the term “Population out of labour force” is equivalent to the previous term “economically inactive population.”


**3.3. Աշխատուժից դուրս բնակչությունն ըստ կրթական մակարդակի, 2018թ.**  
**Population Out of Labour Force by Educational Attainment, 2018**

	Ընդամենը <i>Total</i>	Տղամարդ <i>Men</i>	Կին <i>Women</i>	Քաղաք <i>Urban</i>	Գյուղ <i>Rural</i>	
<i>1000 մարդ persons</i>						
<b>Ընդամենը</b>	<b>902.5</b>	<b>290.8</b>	<b>611.7</b>	<b>534.9</b>	<b>367.7</b>	<b>Total</b>
Բարձրագույն, հետբուհական	125.9	33.9	92.0	100.0	25.9	<i>Tertiary, post-graduate</i>
Միջին մասնագիտական, նախամասնագիտական (արհեստագործական)	208.2	52.1	156.1	144.1	64.1	<i>Secondary specialized, vocational</i>
Միջնակարգ ընդհանուր	432.2	143.5	288.7	219.4	212.8	<i>General secondary</i>
Հիմնական ընդհանուր, տարրական և ցածր	136.2	61.3	74.9	71.4	64.8	<i>General basic, primary and lower</i>
<i>Ընդամենի նկատմամբ, % As share of the total, %</i>						
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>Total</b>
Բարձրագույն, հետբուհական	14.0	11.7	15.0	18.7	7.0	<i>Tertiary, post-graduate</i>
Միջին մասնագիտական, նախամասնագիտական (արհեստագործական)	23.1	17.9	25.5	26.9	17.4	<i>Secondary specialized, vocational</i>
Միջնակարգ ընդհանուր	47.9	49.4	47.2	41.0	57.9	<i>General secondary</i>
Հիմնական ընդհանուր, տարրական և ցածր	15.1	21.1	12.2	13.3	17.6	<i>General basic, primary and lower</i>

**3.4. Աշխատուժից դուրս բնակչության կազմն ըստ մասնակիցների**  
**Population Out of Labour Force Population by Category of Participants**

	Ընդամենը <i>Total</i>	Տղամարդ <i>Men</i>	Կին <i>Women</i>	Քաղաք <i>Urban</i>	Գյուղ <i>Rural</i>	
<i>1000 մարդ</i> <i>persons</i>						
<b>Ընդամենը</b>	<b>902.5</b>	<b>290.8</b>	<b>611.7</b>	<b>534.9</b>	<b>367.7</b>	<b>Total</b>
Սովորող, ուսանող	148.1	63.1	84.9	87.0	61.0	<i>Full-time students, pupils</i>
Տնային տնտեսությունը վարող	268.4	3.8	264.6	173.9	94.5	<i>Housekeeper</i>
Կենսաթոշակառու, հաշմանդամ	195.3	78.7	116.6	145.2	50.2	<i>Pensioner, disabled</i>
Աշխատանք չունեցող այլ անձինք	290.7	145.2	145.6	128.8	161.9	<i>Other jobless</i>
<i>Ընդամենի նկատմամբ, %</i> <i>As share of the total, %</i>						
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>Total</b>
Սովորող, ուսանող	16.4	21.7	13.9	16.3	16.6	<i>Full-time students, pupils</i>
Տնային տնտեսությունը վարող	29.7	1.3	43.3	32.5	25.7	<i>Housekeeper</i>
Կենսաթոշակառու, հաշմանդամ	21.6	27.1	19.1	27.1	13.6	<i>Pensioner, disabled</i>
Աշխատանք չունեցող այլ անձինք	32.2	49.9	23.8	24.1	44.0	<i>Other jobless</i>

**Աշխատուժից դուրս բնակչության կազմն ըստ սեռի, 2018թ.**  
**Population Out of Labour Force Population by Category of Participants and Sex, 2018**



**3. 5. Աշխատուժից դուրս բնակչությունն ըստ աշխատանք չփնտրելու պատճառների, 2018թ.**  
**Population Out of Labour Force by Reasons of not Seeking Job, 2018**

	Ընդամենը <i>Total</i>	Տղամարդ <i>Men</i>	Կին <i>Women</i>	Քաղաք <i>Urban</i>	Գյուղ <i>Rural</i>	
<i>1000 մարդ persons</i>						
<b>Ընդամենը</b>	<b>900.3</b>	<b>289.7</b>	<b>610.6</b>	<b>533.3</b>	<b>367.0</b>	<b>Total</b>
Ընտանեկան հանգամանքներ	146.0	3.3	142.6	99.6	46.4	<i>Family circumstances</i>
Սովորող, ուսանող	151.7	64.8	87.0	89.6	62.1	<i>Full-time students, pupils</i>
Հիվանդություն, հաշմանդամություն	144.4	59.5	84.9	98.7	45.7	<i>Illness, disability</i>
Երեխայի խնամք	79.3	1.0	78.3	41.7	37.6	<i>Child care</i>
Ընտանիքի հիվանդ / հաշմանդամ/ծեր անդամի խնամք	13.3	1.0	12.3	8.8	4.5	<i>Care of a sick / disabled / elderly family member</i>
Չունեն աշխատանք գտնելու հույս (հուսազուրկներ)	158.2	55.8	102.4	72.2	86.0	<i>Hopeless to find a job (discouraged)</i>
Մեկնելու են, գտնվում են արտերկրում	26.2	19.4	6.9	11.9	14.4	<i>Going abroad / is abroad</i>
Այլ	181.2	84.8	96.3	110.9	70.3	<i>Other</i>
<i>Ընդամենի նկատմամբ, % As share of the total, %</i>						
<b>Ընդամենը</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>Total</b>
Ընտանեկան հանգամանքներ	16.2	1.2	23.4	18.7	12.6	<i>Family circumstances</i>
Սովորող, ուսանող	16.9	22.3	14.2	16.8	16.9	<i>Full-time students, pupils</i>
Հիվանդություն, հաշմանդամություն	16.0	20.5	13.9	18.5	12.4	<i>Illness, disability</i>
Երեխայի խնամք	8.8	0.3	12.8	7.8	10.2	<i>Child care</i>
Ընտանիքի հիվանդ / հաշմանդամ/ծեր անդամի խնամք	1.5	0.4	2.0	1.6	1.2	<i>Care of a sick / disabled / elderly family member</i>
Չունեն աշխատանք գտնելու հույս (հուսազուրկներ)	17.6	19.3	16.8	13.5	23.4	<i>Hopeless to find a job (discouraged)</i>
Մեկնելու են, գտնվում են արտերկրում	2.9	6.7	1.1	2.2	3.9	<i>Going abroad / is abroad</i>
Այլ	20.1	29.3	15.8	20.8	19.2	<i>Other</i>



**3.6. Չսովորող և չաշխատող երիտասարդներն<sup>1</sup> (Կրթություն կամ ուսուցում չստացող, զբաղվածություն չունեցող երիտասարդներն) ըստ տարիքային խմբերի, 2018թ.  
Youth not in Education and not in Employment<sup>1</sup> (NEET) by Age Groups, 2018**

	Ընդամենը <i>Total</i>	Տղամարդ <i>Men</i>	Կին <i>Women</i>	Քաղաք <i>Urban</i>	Գյուղ <i>Rural</i>
1000 մարդ <i>persons</i>					
<b>Ընդամենը <i>Total</i></b>	<b>202.4</b>	<b>65.0</b>	<b>137.5</b>	<b>101.5</b>	<b>101.0</b>
15-19	19.4	6.0	13.4	8.7	10.7
20-24	78.5	25.1	53.4	34.9	43.6
15-24 <sup>2</sup>	98.0	31.2	66.8	43.6	54.3
25-29	104.5	33.8	70.6	57.8	46.7
<i>%-ով նույն տարիքային խմբի բնակչության նկատմամբ % to the population of the same age group</i>					
<b>Ընդամենը <i>Total</i></b>	<b>32.7</b>	<b>21.2</b>	<b>44.0</b>	<b>30.8</b>	<b>34.9</b>
15-19	11.3	7.3	14.9	9.5	13.2
20-24	37.8	24.6	50.4	32.3	43.7
15-24	25.7	16.8	34.1	21.9	30.0
25-29	43.8	27.7	60.6	44.4	43.0

<sup>1</sup> Այս ցուցանիշը նույնական է **ԿՋՆ 8.6.1** ցուցանիշի հետ՝ [https://www.armstat.am/am/?nid=699&ind\\_id=8.6.1](https://www.armstat.am/am/?nid=699&ind_id=8.6.1):  
*This indicator is similar with the SDG 8.6.1 indicator: [https://www.armstat.am/en/?nid=699&ind\\_id=8.6.1](https://www.armstat.am/en/?nid=699&ind_id=8.6.1).*